Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՐՐՈՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎ
«ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ»

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի պատմության և հասարակագիտության ֆակուլտետը կազմակերպում է «ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ» խորագրով միջազգային 3-րդ գիտաժողովը:

Գիտաժողովն անցկացվելու է 2025 թ. հոկտեմբերի 2-3-ին Երևանում:

Գիտաժողովի թեմատիկ ուղղություններն են.

- *Պատմության դասավանդման հիմնախնդիրները բուհում*
- *Հանրակրթական դպրոցում պատմության դասավանդման հայեցակարգային և մեթոդական արդի հիմնախնդիրներ:*
- *Ազգային և քաղաքացիական դաստիարակության հարցերը պատմության դասավանդման ընթացքում:*
- *Թվային կրթությունը և արհեստական բանականությունը պատմության դասավանդման գործընթացում:*
- *Հանրակրթական դպրոցի «Պատմություն» առարկայի չափորոշիչով և ծրագրով նախատեսված կրթական ելքային արդյունքների ձևավորման հիմնախնդիրներ:*
- *Սփյուռքի հայկական կրթօջախներում Հայոց պատմության դասավանդման հիմնախնդիրներ:*

Գիտաժողովի նյութերը հրատարակվելու են նոր ստեղծվող «Պատմության դասավանդման հիմնախնդիրներ» գիտական պարբերականի անդրանիկ համարում:

Գիտաժողովին մասնակցության հայտը (զեկուցողի անուն, ազգանուն, գիտական կոչումը (առկայության դեպքում), աստիճանը (առկայության դեպքում) հիմնական աշխատանքի վայրը, զեկույցի վերնագիր և համառոտագիր հայերեն կամ ռուսերեն կամ անգլերեն լեզուներով) պետք է ներկայացնել մինչև 2025 թ. սեպտեմբերի 1-ը historyteachingcenter@aspu.am էլեկտրոնային հասցեին: Հայտերի հաստատման մասին հայտատուները կտեղեկացվեն մինչև 2025 թ. սեպտեմբերի 10-ը:

Նախատեսվում են գիտաժողովին մասնակցության և առցանց, և առերես ձևաչափեր:
Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել +37410597016 կամ +37455464486 (WhatsApp, Viber) (*Արման Մարտիրոսյան)* հեռախոսահամարով կամ գրել historyteachingcenter@aspu.am էլեկտրոնային հասցեին:

Գիտաժողովի կազմկոմիտե

ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԶԵԿՈՒԹՅՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐՆ ԵՆ.

Համակարգչային շարվածքը՝ MS Word 2003-2010 ծրագիր:
Էջի ֆորմատը՝ A4, վերևից ներքևից 2 սմ, ձախից 3 սմ, աջից 1,5 սմ
Ծավալը՝ առավելագույնը 20.000 նշան՝ առանց բացատների:
Տեքստի տառատեսակը՝ հայերեն՝ GHEA Grapalat, ռուսերեն և անգլերեն՝ Times New Roman:
Հոդվածի ներկայացման լեզուն՝ հայերեն կամ անգլերեն կամ ռուսերեն
Հոդվածներն ուղարկել՝
Առաջին էջի վերին տողում (մեջտեղում) 13 pt տառաչափով, գլխատառերով, թավ (Bold) գրվում է հոդվածի վերնագիրը: Մեկ տող բաց թողնելով տողի մեջտեղում 12 pt տառաչափով, գլխատառերով, թավ (Bold) տրվում են հեղինակ(ներ)ի Անուն Ազգանուն(ներ)ը: Մեկ տող ներքև տողի մեջտեղում 12 pt տառաչափով, շեղատառ (Italic) տրվում է աշխատավայրը, բուհը կամ գիտահետազոտական կենտրոնը, ֆակուլտետը, գիտական աստիճանը, կոչումը, քաղաքը և երկիրը: Մեկ տող ներքև տողի մեջտեղում 12 pt տառաչափով տրվում է հեղինակի էլեկտրոնային փոստի հասցեն:
Մեկ տող բաց թողնելով անհրաժեշտ է գրել «Բանալի բառեր» և նշել 7-10 բանալի բառեր (հայերնե, ռուսերեն, ազնլերեն):
Մեկ տող բաց թողնելով անհրաժեշտ է ներկայացնել աշխատանքի հիմնական տեքստը, որի տառաչափը 12 pt է, տողերի հեռավորությունը՝ 1,5: Տեքստը պետք է հավասարեցված լինի երկու կողմերից (Alignment: Justify): Պարբերությունները սկսել 1 սմ խորքից՝ TAB-ի կիրառմամբ:
Հոդվածի՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն (ամփոփում, аннотация, abstract) ամփոփագրերը պարտադիր են, որոնք տրվում են հիմնական տեքստից հետո:
Հղումները պարտադիր են. տրվում են տողատակում, աճման կարգով՝ 10 pt տառաչափով, տողերի հեռավորությունը՝ 1: Հղման տեքստը պետք է հավասարեցված լինի երկու կողմից (Alignment: Justify): Պարբերություններն սկսել 1 սմ խորքից՝ TAB-ի կիրառմամբ: Հղման մեջ պետք է ներկայացված լինեն օգտագործված աշխատանքի հեղինակի ազգանունը և անվան առաջին տառը, այնուհետև աշխատանքի վերնագիրը, հատորը, հրատարակության վայրը, տարեթիվը և էջը: